ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ՍՈՂՈՅԱՆ

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԸ ԱՄԱԿԱՊԻՐ

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ՍՈՂՈՅԱՆ

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԸ ՄԱՆԿԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ
ԱՐՄԱՎԻՐ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(5Հ)
Մ 180

Գիրքը հրատարակվել է Հակոբ Պարոնյանի մահվան 130-րդ տարելիցի առթիվ

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը

Գիտական խմբագիր՝ Աշխեն Զրբաշյան
բ. գ. թ., դոցենտ

Գրախոսներ՝ Ալվարդ Ջիվանյան
բ. գ. դ., պրոֆեսոր
Նվարդ Վարդանյան
բ. գ. թ., դոցենտ

Մակարյան Ա., Սողոյան Ա.
Մ 180 Հակոբ Պարոնյանը մանկագիր: Մենագրություն / Ալ. Մակարյան, Ա. Սողոյան.- Եր.: Արմավ, 2021.- 188 էջ:

Մենագրությունը նվիրված է Հակոբ Պարոնյանի ստեղծագործության՝ մինչ օրս գրեթե անտեսված մի կարևոր հատվածի՝ մանկագրության ուսումնասիրությանը: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում գրական պատկառելի նյութ և փաստվում, որ հանճարեղ երգիծաբանը նաև հայ մանկագրության հիմնադիրներից է, իսկ նրա «Թատրոն. բարեկամ մանկանց»-ը՝ մանկական պարբերականի երախայրիքը: Համակողմանի բացահայտվում են այնտեղ ամփոփված իրապատում ու հրաշապատում հեքիաթների կառուցվածքային, ժանրային առանձնահատկությունները, գրական աղերսները և գեղարվեստական հատկանիշները, գեղագիտական արժեքաբանությունն ու այլևայլ խնդիրներ:

Նախատեսված է գրականագետների, գրականության տեսաբաններիր, բանասերների և գրականությամբ հետաքրքրվող լայն շրջանակի ընթերցողների համար:

ISBN 978-9939-78-128-0

© Մակարյան Ալբերտ, 2021
© Սողոյան Աստղիկ, 2021
© Արմավ հրատարակչություն, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅՈՑ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ 7
1.1 Հարցի պատմությունից 7
1.2 «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականի նպատակն ու ժանրային կառուցվածքը 19
1.3 Պարբերականի հարկադիր ընդհատումը 34

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԻՐԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹԻ ԵՎ ՊԱՏՄՎԱԾՔԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ 41
2.1 Իրապատում հեքիաթի պարոնյանական բանաձևը 47
2.2 Հեքիաթ-պատմվածքը՝ իբրև միջժանրային կառույց 53
2.3 Մանկական պատմվածքները 64
2.4 Պարոնյանական առակը՝ որպես խրատի գեղարվեստական մարմնավորում 80

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹԻ ՊՈԵՏԻԿԱՆ. ԿԱԽԱՐԴԱՆՔԻ ԵՎ ՀՐԱՇՔԻ ԲԵՎԵՌՆԵՐՈՒՄ 91
3.1 «Կարմիր գլխարկի» պարոնյանական փոխադրությունը 92
3.2 Գիգեսի մատանու առասպելի պարոնյանական մշակումը («Կուկեսի մատանին») 118
3.3 Հրաշքի մոտիվը աստվածաշնչյան պատումների համապատկերում 133

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԿԵՐՊԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 143
4.1 Կերպարաստեղծման եղանակները 143
4.2 Կերպարային համակարգը՝ որպես գենդերային և ազգային դաստիարակության միջոց 154
4.3 Հեղինակի և ընթերցողի կերպարները 169

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 183

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս մենագրության վերնագիրը, ավելի քան վստահ ենք, անմիջապես առաջացնելու է բազմաթիվ տարակույսներ. ի՞նչ մանկագրություն. չէ՞ որ Հակոբ Պարոնյանը (1843-1891) ամենից առաջ հանճարեղ երգիծաբան է, որի բազմաբնույթ և բազմաժանր ստեղծագործության մեջ էական տեղ ունեն դիմանկարը, վիպակը, քաղաքական քրոնիկոնը, ակնարկը, նորավեպը, կատակերգությունը, մանրապատումը, հրապարակագրությունը, այսինքն՝ այն, ինչով ճանաչելի է Պարոնյանն ու անկրկնելի: Բայց և այնպես, որքան էլ զարմանալի է, երգիծաբանի ստեղծագործությունը կարոտ է *նոր ընթերցման* ու գնահատման: Եվ այս մենագրությունը պարոնյանական *անծանոթ էջերի* բացահայտման և՛ հերթական փորձն է[1]:

Այսօր շատ քչերը գիտեն, որ **Պարոնյանը հեղինակն է նաև հայոց մանկական առաջին պարբերականի**: Նա Կ. Պոլսում 1876 թվականի հենց սկզբից՝ հունվարի 1-ից, իր խմբագրած հիմնական՝ «Թատրոն» նշանավոր երգիծաթերթին զուգընթաց, հայ երեխաների համար սկսում է հրատարակել մի պատկերազարդ երկշաբաթաթերթ՝ «Թատրոն. բարեկամ մանկանց» անվանմամբ: Ինչպե՞ս՝ ոչ առանց հիմքի կարող են տարակուսել բանիմացները՝ մատնանշելով մինչև նշյալ թվականը հայ իրականության մեջ երևան եկած մանկական հատուկենտ պարբերականների փաստը, և ինչո՞ւ նման վերնագրով, ի՞նչ կապ ունի թատրոնը մանկական գրականության հետ՝ անպայման կհետաքրքրվեն հարցասերները: Ահա հենց այս հարցերին է պատասխանելու այս աշխատությունը, ավելին՝ բացահայտելու է երգիծաբանի բացառիկ ներդրումը հայոց ման-

1 Պարոնյանական անծանոթությունների առիթով մանրամասն տե՛ս **Մակարյան Ալ.**, Կրկին Պարոնյանի հետ (նոր ընթերցումներ), Եր., 2018, 312 էջ:

- Առաջինը յուր սուրը հանձնեց թշնամվույն հաղթվելով, երկրորդը յուր գրիչը հանձնեց հաշտվելով»[128]:

Պարոնյանն ըստ էության նույնիսկ մանկագրական երկերում իր աչքի առաջ ուներ երեխայի թիկունքից ծիկրակող ու պարբերականը կարդացող մեծահասակին և որոշակի հաղորդագրություններ է ուղարկում իր «մեծ բաժանորդներուն»: Նա կարևորում է ընթերցողի ներգրավվածությունը, դիմելաձևերի և տարբեր առաջադրանքների միջոցով կառուցում հեղինակ-ընթերցող երկխոսություն, որն ակնհայտ երևում է և՛ գեղարվեստական տեքստի մակարդակում, և՛ Հակոբ Պարոնյան-իրական ընթերցող նամակագրական կապում:

***

Ամփոփելով մենագրությունը և հավատալով նրա թողած բարերար *ծանոթությանը* Հակոբ Պարոնյանի հերթական *անծանոթությունների* բացահայտման ճանապարհին՝ անհրաժեշտ ենք համարում վերստին մեկ-երկու ընդհանրացված խոսք ասել հանճարի մանկագրության մասին:

«Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականն իր յուրահատուկ տեղն է զբաղեցնում Հ. Պարոնյանի գրական ժառանգության համապատկերում: Առաջին հայացքից հակադրվելով վերջինիս աշխարհընկալման դիտանկյանը՝ կոմիզմին, և չտեղավորվելով «երգիծաբան հեղինակ» տարածված սահմանման կաղապարներում՝ պարոնյանական մանկագրությունը լրացնում է պարոնյանական երգիծանքը՝ նոր շեշտադրումներ ու երանգներ տալով դրան. եթե ծիծաղը հասարակության պախարակելի կողմերի քննադատության անողոք միջոցն է, ապա հայրական լեզվով գրված խրատը դաստիարակում է ապագայի հասարակությունը՝ արմատախիլ անելով ձաղկելի կողմերը ստեղծման պահին:

Պարոնյանի որդեգրած առաջնային սկզբունքը երե-

128 **Պարոնյան Հ.,** Երկերի ժողովածու, հ. 7, էջ 14:

խաներին չխաբելն է: Սուտը գրողի մանկագրական ժառանգության համապատկերում ամենից քննադատվող ու դատապարտվող մեղքն է, և հեղինակը գնում է չկեղծելու ճանապարհով, որն արտահայտվում է նաև պարբերականում հրատարակված գեղարվեստական երկերի ժանրային համակարգում: Մանկագրի նախընտրած ժանրը իրապատում ստեղծագործությունն է՝ իր չորս տարատեսակներով՝ իրապատում հեքիաթ, հեքիաթ-պատմվածք, պատմվածք և առակ:

Հրաշապատում հեքիաթին գրողը դիմում է դրա անհնարինությունը և կեղծիքը բացահայտելու նպատակով՝ ժխտման միջոցով ցույց տալով մանուկ ընթերցողներին, որ կախարդանքը մտացածին է ու անիրական: Պարոնյանը, սակայն, սահմանազատում է կախարդանքն ու հրաշքը. մերժելով առաջինը՝ նա ընդունում և երեխաներին է ներկայացնում աստվածաշնչյան հրաշքները:

«Թատրոն. բարեկամ մանկանց»-ը, ինչպես ինքնին՝ որպես ամբողջական պարբերական, այնպես էլ դրանում հրատարակված ստեղծագործությունների կերպարային համակարգը, ծառայում են Պարոնյանի առաջնային միտումին՝ «դեռահաս տղայոց դաստիարակությանը»: Գեղարվեստական երկերի հերոսները և՛ կերպարաստեղծման օրինաչափություններով, և՛ ներքին հարաբերություններով, և՛ հակադրամիասնությամբ նախ և առաջ ազգային ու դրանից բխող և դրան համապատասխան գենդերային դաստիարակության բանալին են՝ ընդօրինակման այն աղբյուրը, որից ընթերցողը սովորելու շատ բան ունի:

Կերպարային համակարգում առանձնանում են հատկապես հեղինակի և ընթերցողի կերպարները՝ իրական ու ներտեքստային դրսևորումներով: Պարոնյանն առանձնակի ուշադրություն է հատկացնում երկերի համապատկերում ընթերցող երեխաների ներգրավվածությանը՝ իր

գործերն ստեղծելով նրանց քիմքին և աշխարհընկալմանը համապատասխան:

«Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականում հրատարակված գեղարվեստական երկերը կատարյալ չեն. մանկագրության ասպարեզում Պարոնյանը չի ստեղծում այն անմրցակից գլուխգործոցները, որ բնորոշ են նրա երգիծական արձակին. դաստիարակչական ընդգծված երանգը ստվերում է գեղարվեստական կողմը: Այդ գործերը, սակայն, իրենց ուրույն տեղն են զբաղեցնում և՛ հայ մանկագրության, և՛ հայ գրականություն-համաշխարհային գրականություն հարաբերության համապատկերում:

ԱԼԲԵՐՏ ԱՐՇԱՎԻՐԻ ՄԱԿԱՐՅԱՆ

գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ծնվել է 1958-ի ապրիլի 8-ին Դիլիջանում: 1975 թ. ավարտել է տեղի թիվ 1 միջն. դպրոցը:

1976-1981 թթ. սովորել է ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետում, 1982-1985-ին՝ ԵՊՀ-ի ասպիրանտուրայում, իսկ 2000-2001-ին՝ դոկտորանտուրայում: 1986 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, 2002-ին՝ դոկտորականը:

1981-ից դասախոսում է հիշյալ համալսարանում: Այժմ ԵՊՀ-ի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչն է: 2001-2021 թթ. եղել է ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի գիտքարտուղարը, 2003-ից մինչ օրս՝ ՀՀ ԲՈԿ-ի՝ ԵՊՀ-ում գործող՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճաններ շնորհող գրականագիտության 012

մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարը։ Գիտական մի շարք պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ է։

Հեղինակ է «Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջերը»» (1988), «Արևմտահայ գրական դիմանկարը» (2002), «Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում» (2004), «Հարություն Ալամդարյան» (2005, 2013), «Թագուհի Շիշմանյան /Օրիորդ Մենիկ/. Երկեր» (2015), «Կրկին Պարոնյանի հետ» (2018), «Գրականագիտության տիրույթներում» (2021), «Հակոբ Պարոնյանը մանկագիր» (2021) գիտական աշխատությունների և 80-ից ավելի գիտական հոդվածների ու հրապարակումների։

ԱՍՏՂԻԿ ՎԱԼԵՐԻԱՆԻ ՍՈՂՈՅԱՆ

գրականագետ, ասպիրանտ

Ծնվել է 1994-ի հոկտեմբերի 20-ին Երևանում: 2012 թ. ավարտել է Գալուստ Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոցը:

2012-2016 թթ. սովորել է ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատում, 2016-2018-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրայում, իսկ 2018-ից՝ ասպիրանտուրայում: 2021-ի մայիսի 19-ին նշանակված է թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը (թեմա՝ «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը», գիտ. ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆ. Ալ. Մակարյան):

2019-ից դասախոսում է «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանում, իսկ 2020-ից՝Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանում:

Գիտական զեկուցումներով հանդես է եկել միջազգա-

յին գիտաժողովներում, որոնց թվում՝ Միչիգանի համալսարան (ԱՄՆ) և Սանկտ Պետերբուրգի պետական համալսարան (ՌԴ)։

Հեղինակ է գիտական 15 հոդվածների և համահեղինակ մեկ մենագրության՝ «Հակոբ Պարոնյանը մանկագիր» (2021):

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ
ԱՍՏՂԻԿ ՍՈՂՈՅԱՆ

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԸ ՄԱՆԿԱԳԻՐ

Մենագրություն

Գիրքը հրատարակվել է Հակոբ Պարոնյանի մահվան 130-րդ տարելիցի առթիվ

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը

Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան
Գիտական խմբագիր՝ Աշխեն Ջրբաշյան
Հրատ խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Էջադրումը՝ Արշալույս Արզումանյանի
Գեղարվեստական ձևավորումը՝ Արման Ալբերտի Մակարյանի

Ստորագրված է տպագրության 29.04.2021 թ.

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ 80 գ.
Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 11,75 տպ. մամուլ
Գինը՝ պայմանագրային

ARMAV PUBLISHING-HOUSE

Ք. Երևան, Բաղրամյան 3, 4 հարկ
հեռ.՝ +374-99373130
Էլ փոստ՝ armav1815@gmail.com

Yerevan, st. Bahgramyan 3, 4 floor
tel: +374-99373130
Email: armav1815@gmail.com

ISBN 978-9939-78-128-0
9 789939 781280
ԱՐՍԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ